էր նվիրված Տ. Դրամփյանի զեկուցումը։ Բերելով մի շարք նոր փաստեր ֆրանսիական կոմպարտիայի հայկական սեկցիայի գործունեության և գիմադրական շարժմանը հայերի մասնակցության վերաբերյալ, զեկուցողը նշեց, որ այդ շարժման շարքերում ընդգրկված էին ինչպես Ֆրանսիայում ապրող հայերը, այնպես էլ սովետական հայ ռազմագերիները։ Նրանց հերոսական պայքարը բարձր գնահատվեց ֆրանսիական ժողովրդի կողմից։

Պահեստի գեներալ-մայոր Ա. Մարտիրոսյանը սեսիայում խոսեց Հայրենական պատերազմի սկզբնական շրջանի գնահատության հարցի մասին սովետական պատմագրության մեջ։ Նշելով պատերազմի սկզբում սովետական զորքերի լուրջ անհաջողությունները անտեսելու միտումը անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում, նա ընդգծեց, որ վերջին տարիներին մեր պատմագրության մեջ հաղթահարվեց այդ սուբյեկտիվիստական մոտեցումը, բացահայտվեցին մեր զորքերի անհաջողությունների իրական պատճառները։

Պատմական գիտությունների դոկտոր Խ. Բարսեղյանը իր զեկուցման մեջ մասնավորապես կանգ առավ սովետահայ պատմագրության մեջ բերած հաջողությունների և հետագա խնդիրների վրա՝ Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի պատմության գիտական խոր ու բազմակողմանի լուսաբանության ապարհեղում։

Միացյալ գիտական նստաշրջանին մասնակցում էին գիտաշխատողներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներ, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ, նախկին պարտիզաններ, պահեստի սպաներ ու գեներալներ։

Կ. ՍՈՒՐԵՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 50-ԱՄՅԱԿԻՆ

1965 թ. ապրիլի 20-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի միացյալ գիտական սեսիան՝ նվիրված 1915 թ. հայկական մեծ եղեռնի 50-րդ տարելիցին։

Ներածական խոսքով բացելով սեսիան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը ասաց.

— Հիսուն տարի առաջ սուլթանական Թուրքիայի կառավարողները կազմակերպեցին արևմտահայության զանգվածային կոտորածներ, կատարեցին այնպիսի մի ոճրագործություն, որը դարձավ մարդկային պատմության սև էջերից մեկը։ Երիտթուրքական կառավարությունը, իրագործելով նախապես մշակված իր ծրագիրը, ամենարարբարոսական միջոցներով կոտորեց ավելի քան մեկ ու կես միլիոն հայ խաղաղ բնակչություն, թալանելով ու ամայացնելով Արևմտյան Հայաստանը։ Թուրք բռնապետները ձգտում էին իրականացնել հայ ժողովրդին հիմնովին բնաջնջելու հրեշավոր ծրագիրը, բայց նրանց չհաջողվեց մինչև վերջ հասցնել իրենց սև գործը։ Այդ ծրագիրը կարող էր իրագործվել, եթե չիններ Լենինն ու Մեծ հոկտեմբերը։ Արյունաքամ եղած հայ ժողովուրդը 1920 թ. նոյեմբերի 29-ին իր բախտը մեկընդմիշտ կապեց հզոր Ռուսաստանի, սովետական իշխանության, կոմունիզմի գաղափարների հետ։ Ռուս մեծ ժողովրդի, Սովետական Միության բոլոր ժողովուրդների օգնությամբ ու աջակցությամբ Հայաստանը դարձավ ծաղկուն սոցիալիստական հանրապետություն։ Մենք ստեղծարար, խաղաղասեր ժողովուրդ ենք,— այնուհետև ասաց Վ. Համբարձումյանը,— հոգևոր ու նյութական արժեքներ ստեղծելու համար մեզ անսահման հնարավորություններ տվեցին Մեծ հոկտեմբերը, կոմունիստական կուսակցությունը, սովետական երկրի բոլոր ժողովուրդների բարեկամությունը։

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Եսայանը սեսիայում զեկուցեց «Հայ ժողովրդի դեմոդիրը և միջազգային իմպերիալիզմը» թեմայով։ Նա բերեց բազմաթիվ արխիվային փաստեր ու վավերագրային այլ կարգի նյութեր, որոնք անառարկելիորեն վկայում են, որ կես դար առաջ տեղի ունեցած հայկական կոտորածները ոչ թե տարերային բնույթ էին կրում, այլ իրագործվում էին թուրք կառավարողների կողմից ամենայն մանրամասնությամբ նախապես մշակված ծրագրին համապատասխան՝ պետական կարգով։ Հայ ժողովրդին բաժին ընկած ահավոր ողբերգության համար, ընդգծեց զեկուցողը, երիտթուրքերի հետ միասին հանցավոր է նաև միջազգային իմպերիալիզմը, որը կեղծ խոստումներից այն կողմ չանցավ և իր շահադիտական քաղաքականությանը հետամուտ ամենավճռական պահին լքեց տանջահար ու արյունաքամ եղող հայ ժողովրդին։ Սակայն կենաց և մահու ճակատագրական օրերին հայ ժողովուրդը իր հույսը կապեց սովետական իշխանության հետ, որի հաղթանակն էլ հենց փրկություն և վերածնություն բերեց նրան։

1915 թ. հայկական կոտորածների ժամանակ և հետագա տարիներին թուրքական յաթաղանի գոհը դարձան ավելի քան հազար արևմտահայ մտավորականներ գրողներ, արվեստագետներ, բժիշկներ, հրապարակախոսներ, ուսուցիչներ։ Իր զեկուցման մեջ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Մկրյանը անդրադարձավ Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի, Ռուբեն Զարդարյանի, Թլկատինցու և եղեռնի գոհ արևմտահայ մյուս գրողների ստեղծագործություններին։ Թուրքիայի կառավարողները, նշեց նա, չխնայեցին նույնիսկ այն հայ մտավորականներին, որոնք հսկայական ծառայություն էին մատուցել թուրքական կուլտուրային։

Արևմտահայության ինքնապաշտպանական կռիվներին նվիրված իր զեկուցման մեջ բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Ստեփանյանը կանգ առավ Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Վանի, Մուսա լեռան հերոսամարտերի վրա, ցույց տվեց այն կարևոր նշանակությունը, որ ունեցան Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում հայերի կազմակերպած ինքնապաշտպանական մարտերը թուրքական ջարդարարների դեմ՝ հանուն ազատության և պատվասիրության։

Թուրքական պատմագրության մեջ հայկական կոտորածների վերաբերյալ ճշմարտությունը կոծկելու, այդ արյունոտ իրադարձությունները կեղծ հայելու մեջ ներկայացնելու, իրականությունը ենթագիտակցելու փորձերի մերկացմանն էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Ե. Ղազարյանի և պատմական գիտությունների թեկնածու Ռ. Սահակյանի փաստալից զեկուցումը։

«Ժողովուրդների լենինյան բարեկամության անհաղթ ուժը» թեմայով սեսիայում զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Կ. Ուղումյանը։ Նա ընդգծեց, որ սովետական իշխանության հաստատումից հետո անցած տարիների ընթացքում հայ ժողովուրդը մեր մեծ Միության եղբայրական ժողովուրդների ընտանիքում ձեռք բերեց վիթխարի նվաճումներ տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում։

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գալոյանը «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և հայ ժողովրդի վերածնունդը» թեմայով իր զեկուցման մեջ հանգամանորեն խոսեց այն պատմական դերի մասին, որ կատարեցին Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիան, սովետական իշխանությունը և կոմունիզմի գաղափարները հայ ժողովրդի ճակատագրի մեջ՝ նրա կյանքի ամենաբախտորոշ ժամանակաշրջանում։ Զեկուցողն ընդգծեց սոցիալիստական Ռուսաստանի կողմից նորաստեղծ Սովետական Հայաստանին ցույց տրված անշահախնդիր եղբայրական օգնության նշանակությունը երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու, նոր կյանքի հիմքերը կառուցելու գործում։

Միացյալ գիտական սեսիան հակիրճ խոսքով փակեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հ. Բատիկյանը։

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Հայ ժողովուրդը սիրով ու երախտագիտությամբ նշեց իր արժանավոր զավակի՝ մեծանուն հայագետ-գիտնական, ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի ծննդյան 100-ամյակը։

Մեծ գիտնականի ծննդյան 100-ամյակին նվիրված ռեսպուբլիկական հանդիսավոր նիստը տեղի ունեցավ մայիսի 25-ին՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում։

Հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, հարելյանական հանձնաժողովի նախագահ Մկրտիչ Ներսիսյանը։ Իր ներածական խոսքում նա տվեց Աբեղյանի ինչպես գիտական, այնպես էլ հասարակական-մանկավարժական բազմաբովանդակ գործունեության բնութագիրը, շեշտելով, որ Աբեղյանը, իրբև հայ ժողովրդի մշակույթի ու գիտական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը, իր բազմակողմանի և արդյունավոր գործունեությամբ մեծ ավանդ է ներդրել մեր կուլտուրայի վերելքի ու ծաղկման գործում։ Աբեղյանը իր նշանավոր գրչակիցների հետ միասին նոր աստիճանի բարձրացրեց հայ ժողովրդի բանահյուսության, գրականության, լեզվի ուսումնասիրության գործը։ Իրբև գիտական նա հետևողական պայքար է մղել հին դեմ և միշտ փնտրել է նորը, առաջավորը, անբաժան կապված լինելով իր ժողովրդի հետ և հարազատորեն արտահայտելով նրա իղձերն ու ցանկությունները։

Հանդիսավոր նիստի մասնակիցները լսեցին Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Աշոտ Ղանալանյանի բովանդակալից զեկուցումը՝ Մ. Աբեղյանի կյանքի և գիտական գործունեության